

Հայրենադարձությունը որպես Հայաստանի և հայության փրկության ճանապարհ

Արմեն Այվազյան

1. Հիմնական հարցադրումներ

Հայաստանում և արտերկրում բնակվող հայության տարանջատվածությունն իր կնիքն է դնում հայ ազգի արդի զարգացման բոլոր բնագավառների վրա՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, հոգևոր: Ըստ այսմ էլ՝ Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները կարիք ունեն խոր ու բազմակողմանի ուսումնասիրության:

Հայաստանի նորանկախ պետությունը՝ իր արտաքին ու ներքին քաղաքականությունն իրապաշտորեն մշակելու և գործադրելու, ինչպես նաև սփյուռքի հետ արդյունավետ համագործակցություն կազմակերպելու համար՝ պետք է ճիշտ պատկերացումներ ունենա հայության աշխարհասփյուռ բեկորների և ներազգային հարաբերությունների մասին: Հայաստանի և հայության առջև ծառայած բարդագույն խնդիրները լուծելու գլխավոր նախադրյալներից են սփյուռքի հետ առողջ և դինամիկ հարաբերությունների հաստատումը, հայության բոլոր հատվածների գործունեության նպատակային համադրումը: Հետևաբար՝ Հայաստան-Սփյուռք հարաբերություններն անմիջականորեն կապված են Հայաստանի ազգային անվտանգության բնագավառի հետ:

Հայաստանում (ներառյալ՝ կառավարության մակարդակի վրա) սփյուռքի մասին պատկերացումների հիմքում, ցավոք, ընկած են անձնական կամ յուրայինների սահմանափակ և չվերլուծված շփումներն ու փորձառությունը: Սփյուռքի նկատմամբ տարվող քաղաքականությունը կառուցվել ու շարունակում է կառուցվել ոչ թե ճիշտ ու համապարփակ տվյալների և դրանց վրա կատարված վերլուծությունների, այլ իրականությանը չհամապատասխանող կաղապարային կարծիքների և չհիմնավորված հաշվարկների վրա [1]:

Հայկական սփյուռքն ուսումնասիրված է առավելաբար պատմական, փաստանկարագրողական մոտեցումով, պակաս

չափով՝ սոցիոլոգիական, ազգագրագիտական ու մարդաբանական եղանակներով: Սակայն սփյուռքը բացարձակապես ուսումնասիրված չէ ՀՀ ազգային անվտանգության տեսանկյունից, որն այսօր առաջնային նշանակություն ունի: Արդ, անդրադառնանք այդ հարցերից մի քանիսին:

Սփյուռքի մասին ամենատարածված տեսակետը

Սեզանում սփյուռքը շարունակում է դիտվել իբրև բացարձակ դրական արժեք: Հայաստանում և արտերկրում ամենատարածված տեսակետն այն է, որ սփյուռք ունենալը մեծ բարիք է [2]:

Հայաստանի ամենաբարձրաստիճան այրերից ոմանք նույնիսկ կարծում են, որ խիստ ցանկալի է հայերի հաստատումն աշխարհի այն երկրներում, որտեղ նրանք դեռ չեն բնակվում: 1999 թ. սեպտեմբերի 11-ին Ազգային Հեռուստատեսությամբ, պատմելով Հեռավոր Արևելքի երկրներ կատարած իր այցելության մասին, ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը բառացիորեն ասաց. «Ափսո՛ս, որ Հարավային Կորեայում հայեր չեն ապրում: Շատ լավ կլիներ, որ այդ երկրում էլ հայեր ապրեին»: Արտգործնախարարի այս անկեղծ հայտարարությունը մասամբ բացատրվում է պարզ գերատեսչական շահով՝ հայկական համայնքի առկայությունը Հարավային Կորեայում էապես կիեշտացնել Հայաստանի արտգործնախարարության աշխատանքը այդ պետության հետ, ներառյալ՝ գուցե դեսպանության հաստատումը: Բայց տարօրինակ է, որ նախարարին բոլորովին չի հուզում, թե հայերը Հարավային Կորեա կարող էին արտագաղթել կա՛մ Հայաստանից՝ նվազեցնելով հայրենիքի առանց այն էլ կրիտիկապես ցածր գծին հասած ազգաբնակչությունը, կա՛մ արդեն փոքրիշատե կազմակերպված համայնքներ ունեցող այլ երկրներից՝ թուլացնելով հայ ավանդական գաղթօջախները, զուգահեռաբար նաև առավել բարենպաստ պայմաններ ստեղծելով ուժացման համար:

Նույն միտքն, արդեն գրավոր տեսքով, արտահայտում է սփյուռքահայ հայտնի մտավորական, Վենետիկի համալսարանի պրոֆեսոր Լևոն Չեքիյանը. «Եթե նույնիսկ Սփյուռք չունենայինք՝ բաղձալի կըլլար, որ Սփյուռք մը ստեղծեինք: Քանի վրացիի որ հանդիպած եմ, զգացած եմ իրենց մեջ ցավ մը, գրեթե «նախանձ» մը (բարի կամ ոչ՝ ըստ անձին), որ իրենք Սփյուռք չունին [3]: Թեև պրոֆ. Չեքիյանն այնուհետև նշում է, որ «այս չի նշանակել, որ իյնանք մյուս ծայրահեղության մեջ, թե Հայաստանը պարպենք, որ Սփյուռքը գորացնենք» [4], սակայն սփյուռքը բարիք համարելու նրա դիրքորոշումը հստակ է: Չեքիյանն ակնհայտորեն համաձայն չէ, որ

«սփյուռքային իրավիճակը ըմբռնվի լոկ իբր հայրենիքն և հողե գրկում, լոկ իբր անցման շրջան մը, սոսկ ժխտական հղացումներով, առանց որևէ դրական բովանդակության: Ներկայիս, ինչ որ զգալիորեն կնշմարվի Սփյուռքի մտավորականության բավական ընդարձակ մեկ հատվածին մեջ, խորացումի շարժում մըն է՝ ի խնդիր Սփյուռքի դրական արժեքներուն, դրական մտահղացումին ու դրականորեն՝ իբր այդ ապրումին» [5]: Այլուր Ձեքիյանը թվարկում է արտերկրում ապրած հայերի բերած նպաստը հայկական մշակույթի զարգացմանը (տպագրություն, լուսավորչական գաղափարներին ծանոթություն և այլն) [6], սակայն մոռանալով նշել, որ, նախ՝ նույն և անհամեմատ ավելի մեծ նվաճումներ հայերը կարճանագրեին հայրենիքում, եթե օտար նվաճողներն այն ավերած ու ստրկացրած շլինեին, և, երկրորդ, որ այդ կարգի բոլոր ձեռնարկումների գլխավոր նպատակը եղել է հայրենիքի գոյապայքարին սատարելը, մի օր այն անկախ և հզոր տեսնելը, իսկ հաճախ էլ՝ արտերկրում հայ մշակութային ու քաղաքական գործունեությունը մտահղացվել, ծրագրվել ու կազմակերպվել է հե՛նց հայրենիքից (օրինակ, ազատագրական շարժումների մեծ մասը, տպագրության գործը և այլն):

ՀՀ արտգործնախարարի և վեներտիկցի պրոֆեսորի այս տեսակետը մասամբ արտահայտում է ժողովրդի մտայնության մեջ վաղուց արմատավորված մակերեսային մտապատճեն (ստերեոտիպ), որը հայ քաղաքական մտքի երկարատև բացակայության հետևանք է [7]:

Ավելին՝ գնալով հաճախակի կարելի է լսել մի նոր, չափազանց վտանգավոր տեսակետ, որով Հայաստանի՝ հայության կյանքում ունեցած տեղը, կշիռն ու դերակատարումը թերագնահատվում են, հայրենիքը և ազգային պետականությունը համարվում են երկրորդական, իսկ հայերի ցրված և անորոշ նպատակներով գոյատևումը՝ առաջնային: Այսպես, նույն Լևոն Ձեքիյանի մոտ կարդում ենք հետևյալ թեզերը. «Ամբողջ ժողովրդի կենտրոնացումը մեկ աշխարհագրական կետի՝ հայերի իրադրային կենտրոնի վրա, նույնպես վտանգավոր է: Հայաստանի ավելի քան 25-դարյա պատմության ընթացքում մենք տեսել ենք և՛ պետականություն, և՛ անկախություն, և՛ նույնիսկ կայսրություն: Այդ ամենը եղել է, անցել է, նորից կրկնվել է, նորից անցել է և նորից վերադարձել է: Բայց անփոփոխ է մնացել մի բան՝ հայ ժողովրդի գոյությունը: Սա պետք է պահպանել: Ահա սա է մեր հիմնական նպատակն ու խնդիրը: ...Սեր պատմության մեծ մասի ընթացքում մենք ապրել ենք առանց պետականության» [8]:

Ընդգծենք առաջ քաշված դրույթների փաստական սխալները.

1) հայոց պատմությունը ոչ թե «ավելի քան 25-դարյա» է, այլ առնվազն կրկնապատիկ ավել [\[9\]](#) :

2) մեր պատմության մեծ մասի ընթացքում մենք ապրել ենք՝ ունենալով ազգային պետականություն (դրանում համոզվելու համար պետք է պարզ թվաբանական հաշվարկ կատարել).

3) պրոֆ. Չեքիյանի այն թեզը, թե «ամբողջ հայ ժողովրդի կենտրոնացումը մեկ աշխարհագրական կետի՝ հայերի իրադրային կենտրոնի վրա՝ վտանգավոր է»՝ արտառոց է մի քանի առումով: Աշխարհագրական կետը, որի մասին նա խոսում է՝ Հայաստանն է (ավելի շուտ դրանից մնացած 1/10-րդ բեկորը): Թե այդ երբվանի՞ց Հայաստանը դարձավ հայերի «իրադրային կենտրոն»՝ պարզ չէ: Իրականում՝ Հայաստանը հայերի համար ոչ թե «իրադրային կենտրոն է», այլ՝ ՀԱՅՐԵՆԻՔ: Հայրենիքում կենտրոնանալը՝ հայահավաքը, վտանգավոր լինել չի կարող, մինչդեռ հայրենիքից դուրս ցրվելը և անխուսափելի ձուլմանը ենթարկվելը ոչ միայն վտանգավոր է, այլև կործանարար: Մա պարզից էլ պարզ ճշմարտություն է, որը լրացուցիչ մեկնաբանությունների կարիք չունի: Իսկ հայերի համար «իրադրային կենտրոններ» են եղել ու կան հայրենիքից դուրս գտնվող մեր բոլոր գաղթօջախները, այդ թվում՝ Վենետիկն ու Վիեննան, Լոս Անջելեսն ու Մոսկվան, Փարիզն ու Լոնդոնը և մյուսները:

Առավել ևս տարօրինակ է, որ հայրենիքում հայերի կենտրոնացումը վտանգավոր է համարվում այսօր, այս օրհասական պահին, երբ Հայաստանի բնակչությունը մեկ տասնամյակում գրեթե կրկնապատիկ նվազել է, իսկ արտագաղթը դադարելու միտումներ չի դրսևորում [\[10\]](#) :

Հայ ազգը կարող է գոյատևել է զոյատևել ու զարգանալ միմիայն հայրենիքի առկայության պայմաններում: Ի տարբերություն հրեական սփյուռքի, որը պատմական այլևայլ նպաստավոր պայմանների բերումով մոտ երկու հազարամյակ գոյատևեց առանց հայրենիքի, հայկական սփյուռքն՝ առանց Հայաստանի պատմության ընթացքում երբեք ու երբևէ չի եղել ու չի կարող լինել, առավել ևս՝ հետինդուստրիալ զարգացման ու գլոբալացման այս նոր դարաշրջանում: Հայաստանի վերջին բեկորից հայերի դուրս մղումը, նրանց՝ որպես պետականորեն կազմակերպված մի հավաքականություն զարգացման դադարեցումը, կտանի հայությունը դեպի արագընթաց ոչնչացում: Ուստի և՛ սփյուռքի զարգացման ռազմավարությունը կարող է ունենալ մի ելակետ՝ ՀԱՅԱՍՏԱՆԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ, այսինքն՝ Հայաստանի տնտեսական, ժողովրդագրական, ռազմական,

մշակութային հզորացմանն ուղղված գործունեություն: Հայաստանակենտրոն գործունեության միջոցով միայն կարող են ամրանալ ու վերընթաց զարգացում ապրել Սփյուռք-Հայաստան կապերն ու սփյուռքահայ կյանքը:

2. Կազմակերպված ներգաղթը որպես հայ ժողովրդի փրկության ու զարգացման միջոց

Ներկա համակարգային ճգնաժամից դուրս գալու, ամուր պետություն կառուցելու համար Հայաստանին երկարատև ժամանակաշրջան տրված չէ, այլ այդ հնարավորությունն առկա է լինելու ընդամենը ևս մի քանի տարի, առավելագույնը՝ մեկ տասնամյակ: Այս եզրակացությանն է հանգեցնում թեկուզ միայն ժողովրդագրական աղետալի իրավիճակի թուրքիկ գննումը: 1991-2001 թթ. Հայաստանում (ներառյալ Արցախում) ազգաբնակչության թիվը պակասել է 1-1.5 միլիոնով, ներկայումս կազմելով 2,5 միլիոնից ոչ ավելի մարդ, գուցե և ավելի պակաս (2001 թ. Հայաստանում 3 միլիոն մարդ «հայտնաբերած» ՀՀ վիճակագրական ծառայության հաշվարկը ակնհայտորեն չափազանցված է): Եթե նկատենք, որ 1995-2001 թթ. Հայաստանից տարեկան հեռացել են միջինը 50-60 հազար մարդ, ապա արտագաղթի նույն տեմպերի պահպանման դեպքում (իսկ դրանց պահպանվելու համար բոլոր միտումներն առկա են), 2010 թ. Հայաստանում բնակվելու է շուրջ 1,5-2 միլիոն մարդ, ընդ որում՝ արտագաղթողների մեջ դարձյալ մեծ տոկոս են կազմելու երիտասարդությունը և մասնագիտական բարձր պատրաստություն ունեցողները: Հասկանալի է, որ այս ծերացած ու պակաս կրթված մարդու ճանաչումն անընդունակ կլինի պահանջված քանակով համալրելու Հայաստանի անվտանգության հիմնական երաշխիքը հանդիսացող Հայկական բանակը, զարգացնելու Հայաստանի տնտեսությունը, պայքարելու սոցիալական արդարության նվազագույն պահանջները հարգող՝ բարեկեցիկ ու ժողովրդավարական պետություն կառուցելու համար (իսկ առանց ժողովրդի ճնշման՝ այդպիսի պետություն երբեք չի կառուցվի): Ստացվում է կախարդական շրջան. արտագաղթը ծնում է զարգացման համար անբարենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններ, որոնք իրենց հերթին ծնում են արտագաղթ: Ուստի արտագաղթը պետք է կանգնեցվի ամեն գնով, այլապես այն ոչ թե դադարելու, այլ անդադար շարունակվելու է:

Ժամանակն է դարձանել ու փոխհատուցել Հայաստանից տեղի ունեցած մեծ արտագաղթի հետևանքները: Ժամանակն է ծրագրել ու իրականացնել ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՆԵՐԳԱԿՐԹ,

որի գլխավոր առանձնահատկությունը լինելու է ոչ թե հանպատրաստից հայրենադարձությունը, այլ աշխատանքի և բնակության հարցերի նախնական մանրակրկիտ ուսումնասիրությունն ու հստակ լուծումը (ստորև այս գաղափարը հանգամանորեն պարզաբանելու ենք):

Հայրենադարձությունը որպես խնդիր, զարմանալիորեն, բացակայում է սփյուռքահայ կազմակերպությունների օրակարգերից: Ընդհակառակը, ներգաղթը կարծես «տաբու» է դարձել Հայաստան-Սփյուռք ամեն կարգի և մակարդակի հանդիպումներ-քննարկումներում, այդ թվում՝ Հայաստան-Սփյուռք Ա և Բ համաժողովներում:

Ո՛չ Հայաստանի ներկա ֆիկտիվ պետությունը [11], ո՛չ էլ սփյուռքահայ ավանդական կառույցները զանգվածային հայրենադարձություն կազմակերպելու որևէ հետաքրքրություն ու շահագրգռվածություն չունեն: Բարեբախտաբար, ի տարբերություն անցյալի, ներկա պատմական ժամանակաշրջանն ու հենց գլոբալացումը, որը մեզ համար մինչև այժմ հիմնականում բացասական ու վտանգավոր հետևանքներ է ունեցել՝ տալիս են հայրենադարձության խնդիրը անհատական ու խմբական մակարդակի վրա լուծելու աննախադեպ հնարավորությունները, այդ թվում՝ Հայաստանի վիզային «ազատական» ռեժիմը, մարդկային հոսքերի մեծապես աճած շարժունակությունը (մոբիլությունը), բոլոր տեսակի տեղեկատվության առկայությունը մոլորակի ամենահեռավոր վայրերում, սփյուռքահայերի տնօրինած կապիտալի բավարարությունը՝ Հայաստանում սեփական տունն ու գործը հիմնելու համար:

Կազմակերպված ներգաղթը նախատեսում է մի քանի փուլ.

1. Արտերկրում բնակվող ու հայրենադարձվել ցանկացող հայ ընտանիքները միմյանց հետ կապ կհաստատեն ու կկազմեն փոքր խմբեր՝ բաղկացած 3-ից մինչև 50 կամ ավել ընտանիքներից:

2. Յուրաքանչյուր խումբ կհավաքի մի ընդհանուր դրամագուլի՝ Հայաստանում տնտեսական այնպիսի գործունեություն կազմակերպելու համար, որը հայրենիքում կապահովի խմբի անդամ ընտանիքներին աշխատանքով և ապրուստով: Յուրաքանչյուր ընտանիքի շահաբաժինը հավասար կլինի նրա կատարած ներդրմանը:

3. Յուրաքանչյուր խումբ պետք է 2-3 ամսով (գուցե մեկից ավել անգամ) Հայաստան գործուղի իր ներկայացուցիչներին՝ տեղում շուկան ուսումնասիրելու, աշխատանքի և բնակության պայմանները նախապատրաստելու համար.

4. Հայրենադարձությունը կարող է իրականացվել պայմաններին համապատասխան՝ խումբը կճանապարհվի հայրենիք մաս-մաս կամ ամբողջ կազմով (որը մեծ տպավորություն կթողնի սփյուռքահայ զանգվածների վրա):

Հայրենադարձվողները որևէ կառույցից կախման մեջ չեն լինելու և չափազանցված ակնկալիքներ չեն կարող ունենալ, քանի որ Հայաստանում նրանց սպասելու են իրենց իսկ գնած (կամ կառուցած) տունն ու տեղը և իրենց իսկ ստեղծած աշխատանքային գործունեությունը: Առաջին ակիբի մեջ, հավանաբար, լինելու են մախկին հայաստանցիները, որ նշանակում է, թե նրանք նաև քաջածանոթ են լինելու Հայաստանի ներկա տնտեսական, իրավական ու այլապես պայմաններին և լինելու են իրատես:

Անգամ միջին չափերի կազմակերպված ներգաղթը կլուծի հայ ազգի և պետականության առջև կանգնած և անլուծելի թվացող մի շարք հանգուցային խնդիրներ.

1. Ժողովրդագրական. Հայաստանը հայաթափ լինելու վրահաս աղետից կարող է փրկել միայն ու միայն բազմահազարանոց հայրենադարձությունը.

2. Տնտեսական. կազմակերպված ներգաղթը կտրուկ կբարելավի երկրի տնտեսական դրությունը, քանի որ տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ հայրենիք են վերադառնալու իրենց իսկ մախապատրաստած աշխատատեղերը գործարկելու, ուստի երկրի տնտեսությունը ստանալու է զարգացման շատ հզոր ազդակ, զգալիորեն ընդլայնվելու են նեքին շուկան ու սպառողական հնարավորությունները: Բացի այդ՝ հայրենադարձներն իրենց հետ Հայաստան են բերելու զգալի կապիտալ: Միացյալ Նահանգներից ու զարգացած մյուս երկրներից վերադարձող յուրաքանչյուր 5 հոգանոց ընտանիք իր հետ կարող է Հայաստան բերել միջինը մոտ 30.000 ԱՄՆ դոլար: Այս ամենահամեստ հաշվարկով, 20 հազար ընտանիքը (100.000 մարդ) Հայաստան կբերի 600 միլիոն, 40 հազար ընտանիքը (200.000 մարդ)՝ 1,2 միլիարդ, 60 հազար ընտանիքը (300.000 մարդ)՝ 1,8 միլիարդ, 100 հազար ընտանիքը (500.000 մարդ)՝ 3 միլիարդ դոլար:

3. Բարոյահոգեբանական. հայրենադարձվողները, նոր ավյուն ու եռանդ հաղորդելով հայրենիքին, կտրուկ կբարելավեն հայաստանաբնակ ժողովրդի բարոյահոգեբանական անտանելի ծանր հոգեվիճակը: Նրանք կթուլացնեն լարվածությունը երկրի կենսագործունեության բոլոր բնագավառներում՝ սկսած հայրենիքի պաշտպանությունից ու տնտեսությունից, վերջացրած ազգաբնակչության իրավական պաշտպանվածությամբ: Վերջին

տարիներին Հայաստանից դուրս գտնվող մեր շատ հայրենակիցներ (ոչ բոլորն, իհարկե) ապրել են հարաբերականորեն ավելի լավ պայմաններում, քան Հայաստանում մնացածները: Հայրենադարձները կկատարեն ճիշտ նույն դերը, ինչ կատարում են ռազմաճակատներում թարմ զորագնդերը, երբ հարկ է լինում նրանցով փոխարինել հոգնած ու հյուծված, թեկուզ՝ ընտրելագույն ջոկատները:

5. Իրավական. հայրենիքում մշտական բնակություն հաստատողները չեն հանդուրժելու իշխանական ապօրինությունները, նրանք բոլորովին նոր ու հուժկու թափ են հաղորդելու Հայաստանում սոցիալական արդարության ու հավասար իրավունքների համար ընթացող պայքարին: Մրան նպաստելու է հատկապես այն, որ նրանք ունենալու են և՛ տնտեսական որոշակի անկախություն և ինքնուրույնություն, և՛ որոշակիորեն կազմակերպված են լինելու իրենց խմբի շրջանակում: Դրանով իսկ Հայաստանում աննախադեպ զարգացում է ապրելու իրավական դաշտն ու պաշտպանվածությունը:

6. Մշակութային. հայրենիքում մշտական բնակություն հաստատողները նպատակ են ունենալու սովորեցնել զավակներին հայերեն, ներգրավվել հայկական մշակույթի մեջ ու ապրել հայեցի վարքուբարքով (այլապես նրանք Հայաստան վերադառնալու ցանկություն չեն էլ ունենա) [\[12\]](#):

Դրանով իսկ ուժգին հարված կհասցվի Հայաստան թափանցած ապագային, հակամշակութային այլանդակ երևույթներին:

7. Գիտական. Հայաստան մուտք կգործեն օտար լեզուներ իմացող բազմաթիվ պատանիներ ու երիտասարդներ, որոնց հետագա նպաստը հայրենի գիտությանը վիթխարի է լինելու:

8. Հայապահպանական. հայրենադարձությունը կփրկի արտերկրի հայությանը անխուսափելի ճուլումից՝ սպիտակ ջարդից:

Միով բանիվ՝ պատմական այս փուլում համայն հայության առաջին խնդիրը՝ կազմակերպված ներգաղթն է:

ԱՌԱՋԻՆ ՀԱՐՅՈՒՐՆԵՐԻՆ ԿՎԵՏԵՎԵՆ ՀԱՁԱՐՆԵՐԸ,
ՀԱՁԱՐՆԵՐԻՆ՝ ՏԱՄՆՅԱԿ ՀԱՁԱՐՆԵՐԸ...

Armenian Calender Հայկական Թուական

Հայկական Տարին կը սկսի՝ Հայկ Նահապետի Բելին յաղթելու թուականեն, որ է՝ 2492 Քրիստոսէ առաջ: Երբ այս թուականին վրայ աւելցնենք Մեր՝ այսինքն Քրիստոնէական թուականը. կ'ունենանք Հայկական Թուականը...

(2492 + 2006 = 4498) (2492 + 2002 = 4494)

Հայոց Մեծ Թուականը կը սկսի 552 էն: « Հայոց թուական» ին վրայ երբ աւելցնենք 551 կ'ունենանք այսօրուան մեր թուականը. (ՌՆԽԷ = 1447 + 551 = 1998):

Հայոց թուականի սոյն կարգադրութիւնը եղած է՝ Մովսէս Բ. Եղիվարդեցիի օրով:

Հայոց Հին Ամսանուններն

Նաւասարդ , Հռոժի , Սահմի , Տրէ , Քաղոց , Արաց , Մեհ եկան , Արեգ , Ահեկան , Մարերի , Մարգաց , Հրոտից եւ Աւելեաց:

ԺՁ. դարուն՝ Ազարիա Ջուղայեցի կը յօրինէ Նոր ամսանուններ...

Յօղաբեր , Ծաղկեւտ , Գետահոս , Պտղաւտ , Առատահոս , Գոհութիւն , Պտղակիթ , Տերեւաթափ , Չիւնաբեր , Սառուցեալ , Հողմաշունչ , Չիւնահալ եւ Մանիչակ:

Նահապետ Ռուսինեան 1854- ին , Ֆրանսական Յեղափոխութեան տարիներուն՝ Հանրապետական Տոմարի անունները կը թարգմանէ Հայկական անուններուն...

Սառներ , Մերկեր , Վարդին , Ծաղկին , Մարգին , Հնձար , Տօթար , Մրգար , Կթօն , Թառմօն , Միգօն եւ Չիւնաբեր:

Յունուար , Փետրուար , Մարտ , Ապրիլ , Մայիս , Յունիս , Յուլիս ,

Օգոստոս , Սեպտեմբեր , Հոկտեմբեր , Նոյեմբեր , Դեկտեմբեր

Months

(8/11 - 9/9) Navasart	Նաւասարդ
(9/10 - 10/9) Hori	Հռոժի
(10/10 - 11/8) Sahmi	Սահմի
(11/9 - 12/8) Dreh	Տրէ
(12/9 - 1/7) Kaghotz	Քաղոց
(1/8 - 2/6) Aratz	Արաց
(2/7 - 3/8) Mehegan	Մեհեկան
(3/9 - 4/7) Arek	Արեգ
(4/8 - 5/7) Ahegan	Ահեկան

(5/8 - 6/6) Mareri **Մարերի**
 (6/7 - 7/6) Markatz **Մարգաց**
 (7/7 - 8/5) Hroditz **Հրոտից**
 (8/6 - 8/10) Havelouatz **Յավելուատ**

Days of the Month

1- Arek Արեգ	11-Yerzgan Երազկան	21- Krkour Գրգուր
2- Hrant Հրանտ	12- Ani Անի	22- Gortouk Կորթուիք
3- Aram Արամ	13- Barkhar Պարխար	23- Ztmag Ծմակ
4- Markar Մարգար	14-Vanadour Վանատուր	24- Lousnag Լուսնակ
5- Ahrank Ահրանք	15- Aramazt Արամազդ	25- Tzron Յրոն
6- Maztch Մազդեհ	16- Mani Մանի	26- Nbad Նպատ
7- Asdghig Աստղիկ	17- Asag Ասակ	27- Vahakn Վահագն
8- Mecher Միիր	18- Masis Մասիս	28- Sim Սիմ
9- Tsobaper Չոպաբեր	19- Anahid Անահիտ	29- Varak Վարագ
10- Mourtz Մուրց	20- Arakadz Արագած	30-Kisheravar Գիշերավար

Hours of the Day

1:00 am Kizag Գիզակ	Hragat 1:00 pm Հրակաք
2:00 am Lousagn Լուսակն	Hourpaylial 2:00 pm Հուրփայլեալ
3:00 am Aravod Արաւօտ	Taghantial 3:00 pm Թաղանթեալ
4:00 am Lousapayl Լուսափայլ	Arakod 4:00 pm Արագոտ
5:00 am Paylatzou Փայլածու	Arpogh 5:00 pm Արփող
6:00 am Ayk Այգ	Khavarag 6:00 pm Խաւարակ
7:00 am Tzayk Ծայգ	Aghchamoughch 7:00 pm Աղջամուղջ
8:00 am Zoratzial Զօրացեալ	Mtatzial 8:00 pm Մթացեալ
9:00 am Jarakaytial Ճարագայթեալ	Shaghavod 9:00 pm Շաւաղօտ
10:00 am Sharavighial Շարափղեալ	Gamavod 10:00 pm Կամաւօտ

11:00 am Yergradess	Երկրաստե	Pavagan 11:00 pm	Բասական
12:00 pm Shantagogh	Շանթակող	Khotapial 12:00 am	Խոթապեալ

Name of the planets and Their Relation

English	Armenian	Weekday it Stands
Sun	Arev Արեւ	Sunday Կիրակի
Moon	Lousine Լուսին	Monday Երկուշաբթի
Mars	Hrad Հրատ	Tuesday Երեքշաբթի
Mercury	Payladzou Փայլածու	Wednesday Չորեքշաբթի
Venus	Lousntag Լուսնթագ	Thursday Հինգշաբթի
Jupiter	Arousiag Արուսեակ	Friday Ուրբաթ
Saturn	Yerevag Երեւակ	Saturday Շաբաթ
Neptune	Nebtoun Նեպտուն	
Uranus	Ouran Ուրան	
Pluto	Bloudon Պլուտոն	
Earth	Yergir Երկիր	

Names of the Zodiac

English	Armenian	Dates
Aries	Khoy Խոյ	March 21 - April 20
Taurus	Tzoul Յուլ	April 21 - May 20
Gemini	Yergvoriag Երկտրեակ	May 21 - June 21
Cancer	Khetzkedin Խեցգետին	June 22 - July 22
Leo	Arouydz Առիծ	July 23 - August 22
Virgo	Gouys Կոյս	August 23 - September 22
Libra	Gshirk Կշիռք	September 23 - October 22
Scorpius	Garidj Կարիճ	October 23 - November 22
Sagittarius	Aghēghnavor Աղեղնատր	November 23 - December 21
Capricornus	Aydzezhchour Այծեղջիւր	December 22 - January 19
Aquarius	Cherhos Չրհոս	January 20 - February 18
Pisces	Tzoug Չուկ	February 19 - March 20

ՄԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

պրոֆեսոր ՆԻԿՈԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ-ասորեստանյան, հայ-խեթական եւ հայ-ուրարտական տեղանունների ու ցեղանունների ընդհանրությունների թեման արծարծելիս, բնականաբար, աչքի է զարնում այն հանգամանքը, որ սեպագիր արձանագրություններում նրանք հիշատակվում են հին արեւելյան արքաների դեպի Հայկական լեռնաշխարհ ձեռնարկած նվաճողական արշավանքների նկարագրություններով: Ուստի ինքնին հասկանալի է, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ թե ասորեստանյան, խեթական կամ ուրարտական, այլ օտար տարածքների հետ: Հետեւաբար, երբ մասնագիտական գրականության մեջ երբեմն այդ ամենը հապճեպ անվանում են Ասորեստանի, Խեթական թագավորության եւ Ուրարտուի տոպոնիմիկա եւ էթնոնիմիկա, ապա դա ամենեւին լիարժեք չի արտահայտում պատմական իրողությունը:

Կարծում ենք, որ դրանք ավելի շուտ սեպագիր աղբյուրներում հիշատակված օտար տեղանուններ եւ ցեղանուններ են՝ ասորեստանցիների, խեթերի եւ ուրարտացիների կողմից հարմարեցված իրենց վանկագիր սեպագիր կանոններին: Օրինակ, հին հայկական Աղձնիքը սեպագիր աղբյուրներում հիշատակվում է «Ալսե», «Ալգի» եւ «Ալգինի» իդենտիկ հորջորջմամբ խեթերի, ասորեստանցիների եւ ուրարտացիների մոտ, Տայքը՝ «Դայանի» եւ «Դիաուխի» ասորեստանցիների եւ ուրարտացիների մոտ, Կաղմեայ տունը՝ «Կաղմուխի», իսկ Կրերեացը՝ «Կիրրուրի» ասորեստանցիների մոտ, Տուն Թորգոմայ-ը «Թեգարամ(մ)ա» եւ «Թիլ Գարիմմու» խեթերի եւ ասորեստանցիների մոտ, Տմորիքը՝ «Տումուրրու» ասորեստանցիների, Ծոփքը՝ «Իշուա», «Իսուվա» եւ «Ծուփանի», իսկ «Մալաթիան»՝ «Մելիդ», «Մալդիյա»,

«Մելիտեա» ասորեստանցիների, խեթերի ու ուրարտացիների մոտ եւ այլն:

Եւեւը նաեւ, որ իրենց անընդմեջ ռազմական արշավանքների ընթացքում ասորեստանցիները մուտք են գործել Յայկական լեռնաշխարհի հարավային եւ հյուսիսարեւմտյան, իսկ խեթերը՝ հազվադեպ սոսկ արեւմտյան որոշ տարածքներ: Այդ պատճառով էլ հայ-ասորեստանյան, մանավանդ հայ-խեթական տեղանվանական ընդհանրությունները կազմում են համեմատաբար սահմանափակ թիվ: Ինչ վերաբերում է հայ-ուրարտական տեղանունների ու ցեղանունների ընդհանրություններին, ապա նրանք կազմում են շատ ավելի պատկառելի թիվ: Ի դեպ, հատկանշական է, որ բուն ուրարտական տեղանունները սեպագրերում, ինչպես հայտնի է, սերում են նրանց արքաների անուններից եւ դիցանուններից, ըստ որում նրանց թիվը, որքան էլ տարօրինակ թվա, չի հասնում նույնիսկ երեք տասնյակի:

Ելնելով վերոհիշյալից, դժվար չէ կռահել, որ հայ-ուրարտական տեղանունների ու ցեղանունների ընդհանրություններն արծարծվող հիմնահարցում պետք է գրավեն կենտրոնական տեղ: Ուստի պատահական չէ, որ մասնագիտական գրականության մեջ դրանք սկսել են բացահայտվել դեռեւս սեպագիր աղբյուրների վերծանությունից եւ նրանց առաջին հրատարակություններից սկսած:

Մասնագիտական գրականության մեջ բացահայտվել է հայ-ասորեստանյան, հայ-խեթական եւ հայ-ուրարտական բազում տեղանունների այլ զուգահրոմների մի ամբողջ շարք եւս: Դրանցից են Էնգիտե-Անձիտը, Կուլխա-Կողքիսը, Արծանիա-Արածանին, Կուլլիմերի-Կուլմերի-Քղիմարը, Մարկասու-Մարաշը, Նիխիրյա-Նփրկերտը, Տուշպա-Տոսպը, Թումիշկի-Թմիսը, Անաշե-Ալաշկերտը, Չուանի-Չիվինը, Կուլիաինի-Կուլիջանը, Տուարածինի խուբի-Տուարածատափը,

Չաբախա-Ջավախքը, Կատարգա-Կղարջքը, Աբիլիանի-Աբեղեանքը, Աբունի-Չավնունիքը, Ալիա-Աղիովիտը, Ուրտեխի-Արցախը, Էրիկուախի-Ուրկովին, Կուտումե-Կոտումը, Տարիունի-Դարույնքը, Գիառնիանի-Գառնին, Թարրաբա-Թրաբաին, Ծուլուկու-Ծղուկը եւ այլն:

Վերը թվարկված փաստական նյութով, անշուշտ, ամենեւին չեն սպառնում հին հայկական եւ սեպագիր աղբյուրների տեղանունների եւ ցեղանունների ընդհանրությունները: Այդ բավական ծավալուն, արտակարգ կարեւոր ու հետաքրքրական թեման կարիք ունի հատուկ ուսումնասիրության: Սակայն մեր այս հակիրճ հաղորդման բուն նպատակը ոչ թե այդ ընդհանրությունների սպառնիչ արտացոլումն է, այլ դրանց սոսկ թաքնված պատմական արմատների բացահայտումը:

Այստեղ, առաջին հերթին, վերին աստիճանի կարեւոր խնդիր է պարզել, թե արդյոք տվյալ դեպքում մենք գործ ունենք հին արեւելյա՞ն, թե՞ հին հայկական տեղանունների ու ցեղանունների հետ: Այդ հարցին սպառնիչ պատասխան կարող են տալ ինչպես սեպագիր, այնպես էլ հին հայկական գրավոր աղբյուրները:

Օրինակ, ասորեստանյան, խեթական եւ ուրարտական սեպագիր աղբյուրները վկայում են, որ դրանք ի սկզբանե եղել են օտար տարածքներ, որոնք հին արեւելյան արքաներն ասպատակել կամ երկարատեւ եւ համառ պայքարից հետո նվաճել են անընդմեջ արշավանքներով: Ինչ վերաբերում է հին հայկական գրավոր աղբյուրներին, ապա նրանք այդ տարածքները ներկայացնում են որպես պատմական Չայաստանի համապատասխան նահանգներ, գավառներ, բնակատեղիներ եւ աշխարհագրական այլ միավորներ:

Չետեւաբար, ասվածից եւ հայ-ասորեստանյան, հայ-խեթական եւ հայ-ուրարտական համադրություններից հստակ երեւում է, որ դրանք, անկասկած, պետք է դասել հին հայկական տոպոնիմների, էթնոնիմների եւ հիդրոնիմների շարքը: Ասպատակելով կամ նվաճելով այդ նահանգներն ու

գավառները, հին արելեյան արքաները, բնականաբար, ստիպված են եղել նրանց հայկական հորջորջումներն արձանագրություններում հարմարեցնել իրենց վանկագիր սեպագրի կանոններին: Դա է պատմական իրողությունը:

Մյուս կողմից, ասորեստանյան սեպագիր աղբյուրները վկայում են, որ դեռևս ցեղային միությունների դարաշրջանի ուրարտացիները մ. թ. ա. XIII–IX դարերում Յայկական լեռնաշխարհի խորքերն են աստիճանաբար ներթափանցել հարավից (Տիգրիսի եւ Մեծ Չաբի վերին հոսանքներից)՝ վաղ հայկական ցեղերի ու ցեղային միությունների համառ դիմադրության պայմաններում: Դա հաստատվում է հատկապես մ. թ. ա. XIII դարի ասորեստանյան թագավոր Սալմանասար I–ի մի արձանագրության մեջ հիշատակված Ուրուատրի ցեղային միության 8 մարզերի՝ Խիմմեի, Ուատկունի, Բարգունի, Սալուայի, Խալիլայի, Լուխայի, Նիլիպահրիի եւ Չինգունի տեղադրումներով:

Նույնիսկ Վանա լճի ավազանում եւ հարակից տարածքներում ուրարտացիները հաստատվել են սոսկ մ. թ. ա. IX դարի կեսերին՝ պետականության ստեղծման պահին: Յնց այդ ժամանակ էլ այստեղ նրանք սկզբում հիմնադրել են իրենց Արծաշկու–Արծկե, իսկ ավելի ուշ՝ Տուշպա–Տոսպ մայրաքաղաքները:

Ինչ վերաբերում է Յայկական լեռնաշխարհի հյուսիսային նահանգներին ու գավառներին, ապա այստեղ ուրարտացիները երեւացել են սոսկ մ. թ. ա. IX դարի վերջերին կամ VIII դարի սկզբներին: Իսկ մ. թ. ա. VII դարում՝ Ուրարտուի անկման դարաշրջանում, երբ կորսվում էին նախկինում նրա ձեռք բերած մարզերը հարավում եւ այլուր, վերելք ապրող հայկական ցեղերն ու ցեղային միություններն իրենց հյուսիսային տարածքներից աստիճանաբար դուրս են մղում ուրարտացիներին եւ գամում նախնական սահմանափակ տարածքին՝ Վանա լճի ավազանին եւ նրա շրջակայքին: Փոքրիշատե հեռավոր տարածքներից հյուսիսում, որքան մեզ

հայտնի է, Ուրարտուի կազմում, ընդհուպ նրա կործանումը շարունակում է մնալ սոսկ Արարատյան դաշտավայրի Վազա երկիրը՝ Թեյշեբահնի վարչատնտեսական կենտրոնով:

Այսպիսով, սեպագիր աղբյուրների եւ հին հայկական տեղանունների ու ցեղանունների ընդհանրությունների վարագույրի հետեւում թաքնված է վաղ հայկական ցեղերի ու ցեղային միությունների տարածման արեալը մ. թ. ա. II-I հազարամյակներում լայնատարած Յայկական լեռնաշխարհում՝ հյուսիսում մինչեւ պատմական Կղարջք եւ Ջավախք, հյուսիս-արեւմուտքում՝ մինչեւ պատմական Տայք, հյուսիս-արեւելքում՝ մինչեւ Սեւանա լճի ավազանը, Գեղամա լեռները եւ Արցախ, արեւելքում՝ մինչեւ Ուրմիա լճին արեւելքից հարող շրջանները, արեւմուտքում՝ մինչեւ անդրեփրատյան մի շարք տարածքներ, իսկ հարավում՝ մինչեւ Տիգրիսի եւ Մեծ Չաքի վերին հոսանքները:

Այն հանգամանքը, որ հայերը հնուց եղել են Յայկական լեռնաշխարհի տեղաբնիկները, ապա հայ-ասորեստանյան, հայ-խեթական եւ հայ-ուրարտական տեղանվանական ընդհանրությունների հետ, հաստատվում է նաեւ մի շարք այլ հավաստի կռվաններով:

Ի դեպ, հայերի էթնոգենեզի վերաբերյալ առաջ քաշված միգրացիոն տեսությունը Բալկաններից՝ հայերենի հնդեվրոպական լեզու լինելու հիման վրա, վաղուց ապրել է իր դարը: Նորագույն հայտնագործումներն էլ, ընդհակառակը, վկայում են, որ հնդեվրոպական նախացեղերի հայրենիքը եղել են Յայկական լեռնաշխարհը եւ հարակից տարածքները: Դա հիմնավորվում է նաեւ հայերենի եւ սեպագիր ակկադերենի, հայերենի եւ սեպագիր ուրարտերենի ընդհանրություններով:

Ներկայումս պարզվել է, որ հնդեվրոպական հայերենի բառապաշարի մի հարուստ շերտ, որը չի առնչվում հնդեվրոպական արմատներին, բավական համոզիչ հիմնավորվում է սեմալեզու ակկադերենի (ասսուրա-բաբելերենի) հետ անվիճելի աղերսներով: Դա

վկայում է, որ հայերը, համենայն դեպս, սկսած մ. թ. ա. III հազարամյակի վերջերից կամ II հազարամյակի սկզբներից, եղել են ակկադների եւ ասորեստանցիների ու բաբելացիների հյուսիսային հարեւանները: Յետեւաբար, ինքնին հասկանալի է, որ բառապաշարային այդ ընդհանրությունները, ավելի ճիշտ՝ սեմալեզու ակկադերենի բառապաշարի առկայությունը հնդեվրոպալեզու հայերենում արդյունք է վաղ հայկական ցեղերի եւ ակկադների կամ ասսուրա-բաբելացիների քաղաքական ու տնտեսական հինավուրց դարավոր շփումների:

Շատ ավելի վստահ կարելի է պնդել հնդեվրոպական հայերենի եւ ոչ հնդեվրոպական ուրարտերենի բառամթերքի ընդհանրությունները: Յատկանշական է, որ այստեղ հայերենի բառապաշարի ներթափանցումն ուրարտերեն եւ, հակադարձը՝ ուրարտերենի բառամթերքի ներթափանցումը հայերեն ընթացել են շատ ավելի բարենպաստ պայմաններում: Այդ կապակցությամբ պետք է նկատի ունենալ այն կարելոր հանգամանքը, որ վաղ հայկական ցեղերն ու ցեղային միությունները եւ պետականության դարաշրջանի ուրարտացիները համարյա երեք երկար ու ձիգ հարյուրամյակներ ապաստան են գտել կողք-կողքի միեւնույն ընդարձակ տարածքում՝ ողջ Յայկական լեռնաշխարհում:

Մյուս կողմից, դժվար չէ նշմարել, որ հին հայկական նահանգներն ու գավառները սեպագիր աղբյուրներում հիշատակվում են հին արեւելյան գավթիչների ասպատակելու կամ գավթելու կապակցությամբ: Իսկ դա նշանակում է, որ հիշյալ ռազմական հակամարտությունների հիմքում ընկած է եղել հին հայկական ցեղերի ու ցեղային միությունների դարավոր անհաշտ պայքարն ասորեստանյան եւ ուրարտական հզոր տերությունների դեմ՝ իրենց անկախության համար: Ըստ որում, այդ անընդմեջ բախումների ընթացքում հին հայկական հզոր ցեղային միություններն աստիճանաբար բուռն վերելք են ապրում եւ իրենց հիմնական ախոյանին՝

Բիայնիլի-Ուրարտուին քայլ առ քայլ դուրս մղում Յայկական լեռնաշխարհի հյուսիսային տարածքներից: Այդ պայքարում, անկասկած, հարավում զգալի դեր են խաղացել նաեւ սկզբում Ասորեստանը, այնուհետեւ Բաբելոնիան եւ Մեդիան (Մարաստանը)՝ կիմերների եւ սկյութների հետ:

Ի դեպ, այն հանգամանքը, որ մասնագիտական գրականության մեջ սովորաբար ուրարտացիների գերեզմանափոր են ներկայացվում մեդիացիները (մարաստանցիները) եւ բաբելացիները, մասամբ էլ սկյութներն ու կիմերները, ամենեւին լիարժեք չի արտահայտում պատմական իրողությունը: Միամտություն կլիներ խորհել, թե Մեդիան (Մարաստանը) եւ Բաբելոնիան կարող էին վիթխարի ջանքեր գործադրել եւ կործանել երբեմնի հզորագույն Վանի թագավորությունը, որից հետո այդ լայնատարած եւ ըստ ամենայնի հարուստ երկիրը մեծահոգաբար սկուտեղի վրա հրամցնել հայերին: Յետեւաբար դժվար չէ կռահել, որ հին արեւելյան Ուրարտական պետության հիմնական կործանարար ուժերը եղել են տեղի հին հայկական հզորագույն ցեղային միությունները, որոնք, այնուհետեւ, հենց նույն ընդարձակ տարածքի վրա հիմնել են իրենց մնայուն պետականությունը:

Ինչ վերաբերում է ուրարտացիներին, ապա նրանք եւ ֆիզիկապես, եւ մշակութային աստիճանաբար լիովին ձուլվել են կազմավորված հայ ժողովրդին: Դրանից, բնականաբար, հետեւում է, որ եթե անցյալի ուրարտացին ծագումով հայ չէր, ապա ներկայիս հայը նաեւ ուրարտացի է:

Մի խոսքով, հին հայկական ցեղերի ու ցեղային միությունների դարավոր պայքարի պատմությունը ասորեստանցիների եւ ուրարտացիների դեմ Յայկական լեռնաշխարհում, փաստորեն, հայ ժողովրդի կազմավորման դարաշրջանի պատմությունն է, ուրարտացիների (եւ ոչ միայն ուրարտացիների) հայերի մեջ ըստ ամենայնի տարրալուծվելու պատմությունը: